Օրինակ № _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 2265

« 11 » նոյեմբերի 2025 թ. ք. Երևան

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ վարչապետի 2025թ. սեպտեմբերի 22-ի N 835–Լ որոշման համաձայն ՀՀ պաշտպանության նախարարին կից հասարակական խորհրդի ձևավորման աշխատանքները համակարգելու և պատշաճ կազմակերպելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ պաշտպանության նախարարին կից ձևավորման ենթակա հասարակական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամների և ՀՀ պաշտպանության նախարարության միջև աշխատանքներն արդյունավետ իրականացնելու և հետադարձ կապն ապահովելու համար նշանակել.

1) Խորհրդի հետ աշխատանքների համակարգող՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Սարգսյանին,

2) Խորհրդի հետ աշխատանքների պատասխանատու անձ՝ ՀՀ ՊՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ Ս. Մարտիրոսյանին,

3) Խորհրդի հետ աշխատանքների պատասխանատու ստորաբաժանում՝ ՀՀ ՊՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն:

2. Խորհրդի հետ աշխատանքների համակարգողին և պատասխանատու անձին՝

1) հայտերը գնահատելու և հիմնավորված առաջարկություններ ներկայացնելու նպատակով ստեղծել գնահատման հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝ ՀՀ ՊՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության հասարակայնության հետ կապերի բաժնի՝

ա. պետ Ա. Ավագյան (հանձնաժողովի նախագահ),

բ. պետի տեղակալ Ա. Թարվերդյան,

գ. գլխավոր մասնագետ Ս. Մարտիրոսյան,

դ. գլխավոր մասնագետ Մ. Աղեկյան,

ե. գլխավոր մասնագետ Գ. Դավթյան,

զ. գլխավոր մասնագետ Մ. Գալստյան,

է. գլխավոր մասնագետ Մ. Մանուչարյան,

2) համաձայն ՀՀ վարչապետի 2025թ. սեպտեմբերի 22-ի N 835–Լ որոշմամբ հաստատված կարգի պահանջների՝ սահմանված ժամկետներում և ընթացակարգով կազմակերպել ՀՀ պաշտպանության նախարարին կից հասարակական խորհրդի ձևավորման գործընթացը և մինչև 2025թ. դեկտեմբերի 15-ը Խորհրդի կազմը հաստատման ներկայացնել ՀՀ պաշտպանության նախարարին:

3. ՀՀ պաշտպանության նախարարի մամուլի քարտուղարին՝

ապահովել ենթակա ստորաբաժանման աշխատակիցների կողմից գնահատման հանձնաժողովի աշխատանքներին մասնակցությունը:

4. Հրամանի կատարման վերահսկումը ստանձնում է ՀՀ պաշտպանության նախարարը:

5. Հրամանը հասցնել ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ա.Սարգսյանին, ՊՆ գլխավոր քարտուղարին, պաշտպանության նախարարի մամուլի քարտուղարին:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ Ս. ՊԱՊԻԿՅԱՆ